

բեր շկան Իրանի, Կովկասի և Փոքր Ասիայի հայկական հիմնադրոց նահանգների սելջուկյան արվեստը համարել թուրքական կամ, թեկուզև, թյուրքական»։ Այն տեղական նստակյաց ժողովուրդների և առաջին հերթին հայ ժողովրդի արվեստն է։

«Սելջուկյան» կոչված ժամանակաշրջանը, շարունակում է Հ. Օրրեկին, մարդկությանը տվել

է նշանավոր նարտարապետներ, որոնց հայկական անունները արարական տառերով փորագրված են սելջուկյան շինությունների շքամուտքերի վրա, և եվրոպական գիտությունը վաղուց է ցույց տվել Հայաստանի և Վրաստանի նարտարապետության հետ սելջուկյան նարտարապետության ունեցած կապը։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐՔԻՆՅԱՆ

«Վարդանանի Երեմյանի և Գրիգոր Կարապետի «Վարդանանի Երեմյանի և Գրիգոր Կարապետի անվան ինստիտուտի ընդհանուրական թանգարանի հիմնադրումը և առաջին տարիների գործունեությունը»։ Երևան, 1984 թ.։

«Վրաց պատմական վավերագրերի դիվան», Ա, IX—XIII դդ. վրաց պատմական վավերագրեր, կազմեցին՝ Թ. Ննուբիձե, Վ. Սիլոյաձե, Ն. Շոշիաձեի, Վ. Մեղիշիլի, Բ. Բրիլիսի, 1984 թ.։

Վրաստանի բազմազան, տնտեսական և մշակութային պատմության աղբյուրագրական հիմքերի մշակումը վաղուց ի վեր և արդարացիորեն դիտվում է վրացագիտության առաջնակարգ խնդիրներից մեկը։ Իվ. Զավախիշվիլու, Ն. Բերձեձեիշվիլու, Ս. Կուրաշվիլու, Ս. Զիբիայի, Վ. Փոթուրիձեի, Լ. Մելիքսեթ-Քեկի, Գ. Մեսխիայի, Ի. Աբուլաձեի և այլոց ու նրանց աշակերտների աշխատասիրությամբ արդեն լույս են տեսել պատմության ու վավերագրային սկզբնաղբյուրների տասնյակ հատորներ։ Հունարենից, հայերենից, պարսկերենից, թուրքերենից ու մյուս լեզուներից, ամբողջական կամ հատվածաբար, վրացերենի են թարգմանվել Վրաստանի անցյալին վերաբերող բազմաթիվ երկեր։ Իվ. Զավախիշվիլու, աղբյուրների հրատարակման գործը կանոնավոր դարձնելու և միասնական տեքստաբանական հիմունքներով կատարելու համար մեկ տասնամյակ առաջ անհրաժեշտ նկատվեց «Վրաստանի պատմության աղբյուրներ» նոր մատենաշար ստեղծել գործի կազմակերպումն ու իրացումը հանձնարարելով վրացական ՍՍՀ ԳԱ նախագահությանն առնվել «Վրաստանի պատմության աղբյուրների հանձնաժողովին»։ 1976 թ. սկսած այդ շարքով լույս է տեսել 33 գիրք։ Աշխատանքներն ընթանում են միաժամանակ մի քանի մարզում։ Վրաց պատմական մատենագրություն, վավերագիր ու վիճակագիր հուշարձանների գիտական բնագրերի հրատարակում, այլապես աղբյուրների թարգմանություն վրացերեն և վրացական պատմական աղբյուրների թարգմանություն ռուսերեն։ Պիտի ընդունել, որ հայագիտական հետազոտություններ կատարող նյութեր են բովանդակում գրեթե բոլոր հատորները, վաղուց արդեն նկատված է (Ն. Մառ), որ քաղաքական, տրն-

տեսական ու մշակութային ինստիտուտների ընդհանուրական թանգարանի հիմնադրումը և առաջին տարիների գործունեությունը, որ հալածում էր Հայաստանի հիմնական այն աղբյուրները, որ հալածում էր Հայաստանը հիշատակված էլ չեն։

Արժանատի մատենաշարում, ինչպես և սպասելի էր, նշանակալի տեղ է հատկացվում հայկական հուշարձանների հրատարակությանը։ Առանձին հատորներով ներկայացված են Աբրահամ Երեմյանի «Պատմություն պատերազմաց», Ստեփանոս Օրբելյանի «Օրբելյանց պատմություն» (հին վրացերեն թարգմանությունը հայերեն բնագրին առիթ), Զարգիս Ագուլեցու «Օրագրություն» երկերը և «XIV—XV դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանները Վրաստանի մասին» քաղաքի, «Աթենի Սինի հայերեն արձանագրությունները»։ Հայոց պատմությանը անմիջականորեն աղբյուրով վրացական բնագրերի հրատարակություններից են Արսեն Մախարաձեի «Վասն բաժանման վրացի հայոց» երկը և Հակոբ Երեցի «Շուշանիկի վկայաբանություն» ռուսերեն նոր թարգմանությունը։ Ի պատիվ մատենաշարը գլխավորողների պիտի ասել, որ նրանք շարք չեն ներառել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերջերս լույս տեսած վրացերեն մասամբ ժամանակավրեպ թարգմանությունը (ասում ենք «ժամանակավրեպ», որովհետև նրանում նկատի չեն առնվել Խորենացու Պատմության 1913 թ. տպագրությունից հետո ի հայտ եկած ձեռագրական նյութերն ու բնագրագիտական դիտարկումները, իսկ ներածական ուսումնասիրությունը կատարված է Պատմաճոր անգլերեն վերջին հրատարակության ոգով ու հետևողությամբ)։

Իրենց առանձնակի կարևորությամբ ու գիտական հրատարակությամբ հատկանշական են

մատենաշարի Երկու ենթաշար՝ «Վրաց վիճադիր արձանագրություններ» և «Վրաց պատմական վավերագրերի զիվան»։ Նրանցում մշակված են վիճադիր ու վավերագիր աղբյուրները հրատարակելու՝ վրացագիտության համար հիմնովին նոր սկզբունքներ, որոնց հեղինակը, հավանաբար, վրացագիտ-հայագետ Ն. Շոշիաշվիլին է։ Թերևս նյութների բնագավառային, ժամանակագրական կամ տեղագրական ընտրության առանձին հարցեր կարելի է վիճարկել, տարակարծություններ կարող են լինել և տեխնիկական բնույթի որոշ ինգիդներում, բայց հիմնականը՝ վիճագիր ու վավերագիր աղբյուրների բնագրային ճշգրիտ, վավերական ու ստուգելի ակադեմիական հրատարակության կարևորությունը որևէ վիճարկության ենթակա չէ։

Ի տարբերություն Հայաստանում ստեղծված պատմական կացություն, Վրաստանում թագավորությունը գոյատևեց մինչև 1801 թ., որը և պայմանավորեց արքունի և իշխանական զիվանատների անընդմեջ գործունեությունը, ուր ստեղծվում ու պահպանվում էին բոլոր կարգի վավերագրերը։ Հայաստանում վերացված զիվանատներին միտարինելու եկան պաշտամունքային կառույցների պատերը, որոնց վրա վիճագրվում ու հրատարակվում էին ամենատարբեր գործառնությունների վերաբերող փաստեր ու վկայություններ կամ այլպիսիք մուծվում էին ձեռագիր մատյաններ՝ հիշատակարանների ու հիշատարգրությունների տեսքով։ Այս է պատճառը, որ մեղանում պահպանված հաղարավոր արձանագրային ու հիշատակարանային աղբյուրների զիվանց Վրաստանում գտնում ենք առավելապես վավերագրեր՝ բնագրերի կամ նրանց պատճենների տեսքով։ Այսօր IX—XVIII դդ. պահպանված իրացական փաստաթղթերի թիվը հասնում է շուրջ 20 հազարի։ Նորաստեղծ մատենաշարը կոչված է զիտական միասնական սկզբունքով ու առանձին ենթաշարերով հրատարակելու այդ ողջ ժառանգությունը (մենք այսօր տեղ չենք խոսում XIX—XX դդ. շուրջ 45000 փաստաթղթերի մասին, որոնց աղբյուրագիտական արժեքն այլ է)։ «Վրաց պատմական վավերագրերի զիվանի» առաջին հատորն ամփոփում է IX—XIII դդ. 46 փաստաթուղթ։ Յուրաքանչյուր բնագրի հրատարակմանը նախորդում է նրա հանգամանալից նկարագրությունը՝ բնագիրը պատճեն լինելը, հնագրական բնութագրու-

թյունը, թվագրման հիմքը, նախորդ հրատարակումները։ Ըստ ամենայնի հրատարակ է հանված գիտության այսօրվա պահանջներին համապատասխանող և դուրին գործածելի մի գիրք, որով վրացագիտությունը հավաստում է զարգացման իր աստիճանը։ Գրքի առաջաբանը սուսածիք ալելի կարճառոտ է (9 էջ) և հիմնականում նվիրված է ձեռնարկման տեխնիկական կողմի բացատրությանը՝ վավերագրի դասակարգումը ըստ բովանդակության կամ գրչանյութի, ընդգրկման շրջանակները, «վավերագիր» նշանակող տերմինները (ղածերի, սիգելի, բրձաներա, նիշանի, գուշարի, բարաթի, անդերձի, քարտա, պիտակի և այլն), փաստաթղթերի ժամանակագրական-քանակային պատկերը, գոյություն ունեցող հիմնական հրատարակությունները, նոր հրատարակության սկզբունքները։ Հասկանալի պատճառով նյութի աղբյուրագիտական վերլուծությունը, տերմինների բովանդակության բացահայտումն ու ճշգրտումը, ինչպես նաև կոնկրետ վավերագրերի քննության հետ կապված հարցերը սույն հրատարակության շրջանակից դուրս են։ Աշխատասիրողները բնագրագետին վայել համբերությամբ ու հմտությամբ ի նորո ընթերցել-վերծանել և վավերագրերը, բացել բոլոր հավաքումները, վերականգնել լեզվական նորմերով կամ բովանդակությամբ թելադրվող բացթողումները կամ ժամանակի ընթացքում աղարտված տառակապակցություններն ու բառերը։ Կատարված աշխատանքի արդյունքը միանգամայն գոհացուցիչ է. կովկասագետն այժմ հնարավորություն ունի առավել վստահությամբ քննության առնելու վրաց վավերագրային նյութը, իսկ վերջինս պատմական անցքերի ու իրողությունների անմիջնորդ և ոչ ընդմիջված գրառում է, արձանագրությունների պես խիստ իրական ու կոնկրետ բովանդակությամբ։

Այսօր դժվար է ասել, թե մատենաշարն իր ենթաշարերով քանի՞ տասնյակ հատորից կբաղկանա և ե՞րբ կարող է ավարտին հասնել, բայց վավերագրերի զիտական հրատարակությունն արդեն սկսված է։ Համոզված ենք, որ առաջիկայում հարց պիտի առաջանա ընտրել և հալերեն թարգմանել ընդգրկված վավերագրերի այն մասը, որ պիտանի կնկատվի Հայաստանի և Անդրկովկասի պատմության առանձին կարևոր խնդիրներ աղբյուրագիտական լայն հիմքի վրա բնանելու համար։

Պ. Մ. ՄՈՒՐԱՎՅԱՆ